ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԳՈՒՄԳԱՊԸ - ՍՏԱՆՊՈՒԼ

ARMENIAN PATRIARCHAT
TR - 34480 KUMKAPI - ISTANE
Tel. : (90-1) 517 0970 or 71
Fax : (90-1) 516 4833

# ՀԱՆԳԻՍՏ
# ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ
# ՏԷՐ ԳԱՐԵԳԻՆ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
# ԵՐԱՆԱՇՆՈՐՀ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ Կ.ՊՈԼՍՈՅ

Հայրն մեր Հոգեւոր եւ գլուխն Առաքելական Եկեղեցւոյս Մերոյ, որ ի Կ.Պոլիս եւ Կրետէ՝

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ
ՏԷՐ ԳԱՐԵԳԻՆ Բ ՊԱՏՐԻԱՐՔ ԳԱԶԱՆՃԵԱՆ,

աւանդեաց զհոգին իւր ի ձեռս Հօրն Երկնաւորի, ի 10 Մարտի, յաւուր Երկուշաբթի, ի Սուրբ Փրկիչ Ազգային Հիւանդանոց, յետ երկարատեւ հիւանդութեան իւրոյ, ի սուգ համակեալ զամենայն որդիս իւր Հոգեւոր եւ մարմնաւոր իւր:

Կարգ Օծման եւ Հանգստեան յուղարկաւորութեան քահանայապետական Հանգուցելոյն կատարեսցի ի 15 Մարտի, յաւուր Կիրակի, ի ժամ 10.00-ի ի Սուրբ Աստուածածին Աթոռանիստ Մայր Եկեղեցւոջ, որ ի Գումգաբու եւ մարմինն ի յազգային գերեզմանատունն Շիշլի, ուր եւ ամփոփի:

Մահուամբ Հօրն մերոյ սիրելւոյ բարձեալ լինի վաստակաւոր անուանի Հոգեւորական դասուն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ: Առ Աստուած փոխի ի կենաց աստի մին ի չորից գլխաւոր աթոռակալաց ի Նուիրապետական Աթոռոց Հայաստանեայց Եկեղեցւոյ: Լռի ձայն աւետարանչին որոտման բեմին: Զրկի աստի կենաց այրն այն եւ բարի՝ որ վայելէր զվստահութիւն պետական իշխանութեանց, պարգեւս Ազգիս Մերոյ եւ զսէր ամենայն որդւոց իւրոց որոց վասն եւ զանձն իւր պատարագեաց ի վերայ սեղանոյ սրբութեան սպասու Եկեղեցւոյ:

Կամք ամենեքեան առաջի Արդարին Աստուծոյ եւ մորմոքմամբ սրտի հայցեմք ի Հօրէ Ամենակալէ զի ի լոյս Երեսաց իւրոց հանգուսցէ զհոգի ծառայիս իւրոյ եւ պաշտօնէին:

Աղաչեսցուք զԱմենակալն Աստուած զի անսասան պահեսցէ զԵկեղեցի իւր, եւ մխիթարութիւն Սուրբ Հոգւոյ պարգեւելով՝ ողորմեսցէ համայն ժողովրդեան մերոյ եւ ամենայն պաշտօնէից Հայաստանեայց Եկեղեցւոյ:

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ

Ա - 1 / 267

digitised by A.R.A.R.@